

**Դատական Գործ N: ԿԴ2/0009/02/14**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	20-01-2014
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
Հասցե:	ք.Երևան, Կառավարական տուն 3
Գրանցման համար:	286.180.05907
ՀՎՀՀ:	02508046
<b>Պատասխանող</b>	
Անուն:	„Արզնու Տոհմային ԹՏԽ„ ԲԲԸ
Հասցե:	Կոտայքի մարզ, գ.Արզնի
ՀՎՀՀ:	03504939
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	Գումարի բռնագանձման պահանջի մասին:
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	11.1
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	
<b>Ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	17-01-2014
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Չարենցավան
Դատավորի անուն:	Էդգար Ռազմիկի Սեդրակյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Չարենցավան
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	20-01-2014
<b>Այլ նշումներ:</b>	

<b>Ամսաթիվ:</b>	20-01-2014
<b>Սահմանվել է արտոնություն:</b>	Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	20-01-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովում կիրառելու
<b>Բավ/մերժ:</b>	Բավարարվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	20-01-2014
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	20-01-2014
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Նշանակվել է դատական նիստ:</b>	
<b>Որոշման բովանդակություն:</b>	
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովումը վերացնելու
<b>Բավ/մերժ:</b>	Բավարարվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	17-02-2014
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնել
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Նշանակվել է դատական նիստ:</b>	
<b>Որոշման բովանդակություն:</b>	<p>Գործ թիվ ԿԴ2/0009/02/14 Ո Ր Ո Շ ՈՒ Մ</p> <p>ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>17 փետրվարի 2014թ. ք. Չարենցավան</p> <p>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ ԴԱՏԱՎՈՐ ԷԴ. ՍԵՂՈՎԱԿՅԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ն. ՆԱՂԱՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ս. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ</p> <p>Դռնբաց դատական նիստում, քննելով թիվ ԿԴ2/0009/02/13 քաղաքացիական գործով պատասխանող «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի ներկայացուցիչ Սամվել Ղալաթյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու պահանջի մասին</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին: Միաժամանակ միջնորդել է կիրառել հայցի ապահովման միջոցներ. արգելանք դնել «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի գույքի և դրամական միջոցների վրա: 20.01.2014թ. դատարանի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է:</p> <p>13.02.2014թ. պատասխանող «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի</p>

ներկայացուցիչ Սամվել Դալլաքյանը միջնորդություն է ներկայացրել դատարան ընկերության դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնելու մասին: Հայտնել է, որ ընկերության գույքի արժեքը կազմում է հայցագնի տասնապատիկը, իսկ ընկերությունը կրում է խոշոր վնասներ:

Դատական նիստին ներկայացել են պատասխանողի ներկայացուցիչը, որը խնդրեց վերացնել հայցի ապահովման միջոցը, և երրորդ անձի ներկայացուցիչը, որը չառարկեց միջնորդության դեմ: 17.02.2014թ. ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը գրություն է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ առարկություններ չունի:

Դատարանը, լսելով պատասխանողի ներկայացուցչին, երրորդ անձի ներկայացուցիչին, հետազոտելով միջնորդությունը և յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա, հանգում է այն հետևության, որ վերոհիշյալ ապացույցներով միջնորդությունը հիմնավոր է, բխում է ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի պահանջներից և ենթակա է բավարարման: Միաժամանակ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման նման պայմաններում խախտվում է պատասխանողի Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով ամրագրած սեփականատիրոջ իրավունքները և սահմանափակվում է նրանց սեփական հայեցողությամբ դրամական միջոցները տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքը, որի պատճառով պատասխանող «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն կարող է կրել ֆինանսական և նյութական վնասներ: Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 144 հոդվածներով՝ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Միջնորդությունը բավարարել:  
 Վերացնել ըստ հայցի ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ընդդեմ «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԿԴ2/0009/02/14 քաղաքացիական գործով կիրառված պատասխանող «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի դրամական միջոցների վրա դրված արգելանքը:  
 Որոշման կատարումը հանձնարարել ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնին:  
 Որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

ԴԱՏԱՎՈՐ Է.Ղ. ՍԵՂՈՎԿՅԱՆ

Դատաքննության ամսաթիվ:	04-03-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-02-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	

Դատաքննության ամսաթիվ:	18-03-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	04-03-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	15-04-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-03-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	07-05-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	15-04-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	27-05-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-05-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	11-06-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-05-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	1
Նշանակվել է:	Դատաքննություն

<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Ղապառանկության ամսաթիվ:</b>	26-06-2014
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	11-06-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	10:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Նշանակվել է:</b>	Ղապառանկություն
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Ղապառանկության ամսաթիվ:</b>	15-07-2014
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	26-06-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Նշանակվել է:</b>	Ղապառանկություն
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Ղապառանկության ամսաթիվ:</b>	29-07-2014
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	16-07-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	10:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	1
<b>Նշանակվել է:</b>	Վճիռ/որոշում հրապարակելու օր
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Հայցի լուծման ամսաթիվ:</b>	29-07-2014
<b>Հայցի լուծումը:</b>	Բավարարվել է մասնակի
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	345-347
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	470
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	472
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	409
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	502
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	509

<b>Հողված</b>	
Հողված	48-49
<b>Հողված</b>	
Հողված	53
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Օրենսգիրք:	Քաղաքացիական օրենսգիրք
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
<b>Դատական ակտ (վճիռ, որոշում):</b>	<p>Թիվ ԿԴ2/0009/02/14 Վ Ճ Ի Ռ</p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 29 հուլիսի 2014թ. ք. Չարենցավան</p> <p>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ ԴԱՏԱՎՈՐ Է.Ղ. ՍԵՂՈՒԿՅԱՆԻ</p> <p>ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ն. ՆԱԴԴԱԼՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ա. ԱԲԱԶՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ա. ԶԱՆԿԵՆՅԱՆԻ</p> <p>Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ Գյուղատնտեսության նախարարության /հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02508046/ ընդդեմ «Արզնու Տոհմային ԹՏՆ» ԲԲԸ-ի /հասցեն գ. Արզնի, ՀՎՀՀ 03504939/ գումարի բռնագանձման պահանջի մասին</p> <p>Նկարագրական մաս Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը Հայցվորը դիմել է դատարան 20.01.2014թ.: Հայրը վարույթ է ընդունվել 20.01.2014թ.: 20.01.2014թ. դատարանը որոշում է կայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին: 20.01.2014թ. դատարանը որոշում է կայացրել հայցի ապահովում կիրառելու մասին: Հայցադիմումին պատասխան է ներկայացվել 12.02.2014թ.: 17.02.2014թ. դատարանը որոշում է կայացրել «Արզնու Տոհմային ԹՏՆ» ԲԲԸ-ի դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնելու մասին: 02.06.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան հայցային պահանջի չափը նվազեցնելու մասին: 15.07.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան, որով պնդել է հայցային պահանջը 27.565.763 ՀՀ դրամ: Գործը քննվել է համաձայն ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոնների:</p> <p>2. Հայցի հիմքերը, հայցվորի փաստարկները և պահանջը</p>

Հայցվոր ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը դիմելով դատարան հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի, ի դեմս տնօրեն Ս.

Շահնազարյանի միջև տոհմային երինջների ձեռք բերման համար 2009 թվականի հուլիսի 4-ին կնքվել է տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ 09/1 պայմանագիրը, որով սեփականության իրավունքով Գնորդին է հանձնվել 110352700 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 90 գլուխ Հոլշտինյանը ցեղի տոհմային երինջներ համաձայն Պայմանագիր 1-ի թիվ 3 հավելվածի, 2009 թվականի հուլիսի 21 ին կնքվել է տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ պայմանագիրը, որով սեփականության իրավունքով Գնորդին է հանձնվել 72342300 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 59 գլուխ Սիմենթալ ցեղի տոհմա երինջներ համաձայն Պայմանագիր 2-ի թիվ 3 հավելվածի, 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքվել է տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ-10/3 պայմանագիրը, որով սեփականության իրավունքով Գնորդին է հանձնվել 35031238 ՀՀ դրամ 80 լուսնա ընդհանուր արժեքով 32 գլուխ Հոլշտին (կարմիր) ցեղի տոհմային երինջներ համաձայն Պայմանագիր 3-ի թիվ 3 հավելվածի, Պայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի ուժով կողմերի միջև ծագել է պարտավորական իրավահարաբերություն, որի հիմնական բովանդակությունն են կազմում Վաճառողի և Գնորդի փոխադարձ իրավունքները և պարտականությունները: Պայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 2 հավելվածներով սահմանվել է վճարման ժամանակացայցերը:

Պայմանագիր 1-ով վճարման ժամկետ է սահմանվել մինչև 2013 թվականի հուլիսի 05-ը, Պայմանագիր 2-ով վճարման ժամկետ է սահմանվել մինչև 2013 թվականի հուլիսի 22-ը, իսկ Պայմանագիր 3-ով 2013 թվականի սեպտեմբերի 17-ը:

Պայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի 2.4.3 կետերի համաձայն Գնորդը պարտավոր է ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը ըստ ժամանակացույցերի, իսկ ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրեր 1-ի և 2-ի 5.1 կետերով նախատեսված տույժերը, ըստ որի յուրաքանչյուր ուշացված օրվա համար հիստվարկվում է տույժ Ավարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով Պայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի 7.5 կետերով դրանք ուժի մեջ են մտնում ստորագրելու պահից և դադարում են պատշաճ կատարմամբ:

Գնորդը չի կատարել Պայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի 2.4.3 կետերով սահմանված պարտավորությունները և նրա պարտքը Վաճառողի նկատմամբ 2013թ. դեկտեմբերի 27-ի դրությամբ կազմում է Պայմանագիր 1-ի համաձայն 47959160 ՀՀ դրամ, որից ժամկետանց գումարը 44140966 ՀՀ դրամ, հաշվարկված չմարված տույժը 3818194 ՀՀ դրամ, իսկ Պայմանագիր 2-ի համաձայն 31268882 ՀՀ դրամ, որից ժամկետանց գումարը 28939192 ՀՀ դրամ, հաշվարկված չմարված տույժը 2329690 ՀՀ դրամ, Պայմանագիր 3-ի համաձայն է 11009444 ՀՀ դրամ, որից ժամկետանց գումարը 10480194 ՀՀ դրամ. հաշվարկված չմարված տույժը 529250 ՀՀ դրամ:

Վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347, 470, 472, 502 հոդվածները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ և 87-րդ հոդվածներով, 88-րդ հոդվածի 1-ին մասով և 204 հոդվածով խնդրել է հայցադիմումն ընդունել վարույթ: «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ից հոգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 90237486 (Իննսուս միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ գումար և ժամկետանց վճարումների համար հաշվարկը 2013 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև դրա փաստացի մարումը շարունակել օրական 0.05 %-ով յուրաքանչյուր ուշացրած օրվա համար, մինչև դրա փաստացի մարումը և դրանք բռնագանձել հոգուտ պետական բյուջեի:

Միջնորդել է պետական տուրքի ժամկետը հետաձգել և անդրադառնալ վերջնական դատական ակտով:

Ղատական նիստի ժամանակ հայցվորի ներկայացուցիչը հայտնեց, որ հաշտության համաձայնության բանակցություններ են ընթանում կողմերի միջև, միջնորդեց հետաձգել դատական նիստը, սակայն դատարանին անհայտ պատճառով հաջորդ դատական նիստին չներկայացավ:

02.06.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան հայցային պահանջի չափը նվազեցնելու մասին, իսկ 15.07.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան, որով պնդել է հայցային պահանջը 27.565.763 ՀՀ դրամ, մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հաշվարկված պայմանագրի 5.1 կետով սահմանված տոկոսները, ինչպես նաև հօգուտ ՀՀ պետական բյուջեի 1.804.750 ՀՀ դրամ որպես չվճարված պետական տուրքի գումար:

### 3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը հայցադիմումին պատասխան է ներկայացվել 12.02.2014թ., որով հայտնել է, որ հայցապահանջը չեն ընդունում հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ Կառավարության 22.03.2007թ. թիվ 336-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման վերաբերյալ ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կաթի արտադրության ծավալների աճ ապահովելն ու կաթնային տավարաբուծության զարգացումը:

ՀՀ Կառավարության կողմից հատկացվել են միջոցներ վերը նշված Ծրագիրն իրականացնելու նպատակով, արտերկրից ներկրվել են տոհմային անասուններ:

Ծրագրի շրջանակներում «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ կնքել է տարածամկետ վճարման պայմանով առուվաճառքի 04.07.2009թ. թիվ ՀՀԳՆ-ԵՏԿ-09/1, 21.07.2009թ. թիվ ՀՀԳՆ- ԵՏԿ-09/3 և 17.09.2010թ. թիվ ՀՀԳՆ-ԵՏԿ-10/3 պայմանագրերը, որոնց համաձայն «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն տարածամկետ վճարման պայմանով ձեռք է բերել տոհմային երինջներ:

Վերոհիշյալ պայմանագրերի կնքման և երինջների ձեռք բերման նպատակն էր որակյալ ցեղատեսակների կիրառման միջոցով տավարաբուծության ոլորտում «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի գործունեության զարգացումը, սակայն իրականում ընկերությունը ստացել է լրիվ հակառակ արդյունք և հայտնվել է ծանր ֆինանսական կացության մեջ:

Նախ և առաջ վերոհիշյալ պայմանագրերով ձեռք բերված տոհմային երինջների մեծամասնությունը կամ անկել են, կամ վիժել:

Փաստորեն «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն կատարելով պայմանագրերի 2.4.4. 2.4.5. կետի դրույթներին համաձայն ստանձնած տոհմային կենդանիների խնամքի, կերակրման և այլ պարտավորությունները, այդ նպատակով ծախսել է իր միջոցները, սակայն չի ստացել այն արդյունքները, որոնք նախատեսվում էին ՀՀ Կառավարության 22.03.2007թ. թիվ 336-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման վերաբերյալ ծրագրով (Ծրագրով նախատեսված է, որ ներկրված տոհմային երինջները ձեռք բերելուց հետո, 7-րդ ամսից սկսած, անասնատերը 4,5 տարվա ընթացքում ամբողջությամբ կմարի վարկը: Անասունները ձեռք բերելուց մինչև վարկի ամբողջությամբ մարման գործընթացը կավարտվի 5 տարվա ընթացքում: Ձեռք բերված կենդանիներից անասնատերերը տարեկան կստանան առնվազն 4500-5000 կգ կաթ, որի արժեքը լիովին բավարար է վարկի մարման համար): Ասկայն իրականում Ծրագրում նշված ցուցանիշները չեն ապահովվել:



Ղրա հետ մեկտեղ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը անտեսելով ՀՀ Կառավարության 05.05.2011թ. թիվ 555-Ն որոշման դրույթները, շարունակում է Հայաստանի Հանրապետություն ներկրել տոհմային երնջների նոր խմբաքանակներ, չկատարելով որոշման հետևյալ դրույթը «նախկինում ներկրված կենդանիների վերարտադրության արդյունքում ստացված սերնդից լավագույն կենդանիների գնման և տարածամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին» տոհմային երնջների, իսկ գյուղական համայնքներին համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի համաձայն» տոհմային արտադրող ցուլերի հատկացման համար» և Ծրագրին հատկացված միջոցները հնարավոր էր նաև օգտագործել ներկրված կենդանիների սերնդի ձեռք բերման համար, ինչը մինչ օրս տեղի չի ունեցել: Եթե նշված որոշման դրույթները իրականացվեին ամբողջությամբ և ՀՀ Կառավարության կողմից հատկացված միջոցների մի մասը ուղղվեր տեղական շուկայից տոհմային կենդանիների ձեռք բերմանը, ապա ընկերությունը կունենար ՀՀ գյուղատնտեսության նախարարության պարտքերը մարելու հնարավորություն:

Փաստորեն «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն կատարելով պայմանագրերի դրույթները ունեցել է վնաս, որը նաև հաստատվել է ընկերության գործունեության աուդիտ իրականացնող անկախ աուդիտորների կողմից:

Բացի այդ, հայցադիմումում նշված 90237496 ՀՀ դրամից մարվել է 16555000 ՀՀ դրամ:

Ամփոփելով ասվածը, հայտնել են, որ «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն չի ընդունում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջեի 90237496 (իննսուն միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ գումարի և ժամկետանց վճարումների համար հաշվարկված 2013 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև դրա փաստացի մարումը շարունակելու օրական 0,05% - ով յուրաքանչյուր ուշացրած օրվա համար, բռնագանձելու մասին պահանջը:

Ղատաքնության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը չառարկեց նվազեցված հայցապահանջի դեմ:

#### Ղատաճառաբանական մաս

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը 1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի, ի դեմս տնօրեն Ս. Շահնազարյանի միջև 2009 թվականի հուլիսի 4-ին կնքվել է տարածամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ 09/1 պայմանագիրը, 2009 թվականի հուլիսի 21 ին կնքվել է տարածամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ պայմանագիրը, 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքվել է տարածամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏՎ-10/3 պայմանագիրը, որոնցով վճարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար 2013 թվականի հուլիսի 05-ը, 2013 թվականի հուլիսի 22-ը, 2013 թվականի սեպտեմբերի 17-ը:
2. Ղատախանողը չի կատարել Ղայմանագրեր 1-ի, 2-ի և 3-ի 2.4.3 կետերով սահմանված պարտավորությունները և նրա պարտքը հայցվորի նկատմամբ 2013թ. դեկտեմբերի 27-ի դրությամբ կազմում է Ղայմանագիր 1-ի համաձայն 47959160 ՀՀ դրամ, Ղայմանագիր 2-ի համաձայն 31268882 ՀՀ դրամ, Ղայմանագիր 3-ի համաձայն 11009444 ՀՀ դրամ:
3. 02.06.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան հայցային պահանջի չափը նվազեցնելու մասին, իսկ 15.07.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան, որով պնդել է հայցային պահանջը 27.565.763 ՀՀ դրամ:
4. Ղատաքնության ընթացքում ներկայացվել է հաշտության

համաձայնության նախագիծ, որը կողմերի հավանությանը  
չարժանացավ:

5. Դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը  
նվազեցված հայցապահանջի վերաբերյալ առարկություններ  
չներկայացրեց:

2. Կիրառելի իրավունք

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 345, 347, 470, 472, 502, 505, 409,  
ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48, 49, 53  
հոդվածներ:

3. Իրավական խնդիրը

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դիմել է դատարան  
ընդդեմ «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի գումարի բռնագանձման  
պահանջի մասին:

4. Դատարանի իրավական վերլուծությունը,  
պատճառաբանությունները և եզրահանգումը  
Դատարանը, լսելով հայցվորի ներկայացուցչին, պատասխանողի  
ներկայացուցչին, հետազոտելով հայցադիմումը և դրան կից  
ներկայացված փաստաթղթերը և յուրաքանչյուր ապացույց  
գնահատելով, գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և  
օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ,  
հանգում է այն հետևության, որ վերոհիշյալ ապացույցներով  
հայցադիմումը հիմնավորված է և ենթակա է բավարարման  
մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասի՝  
«Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է  
մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի  
գործողություն. այն է վճարել դրամ, ... կամ ձեռնպահ մնալ որոշակի  
գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի  
պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի՝

«Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ  
պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական  
ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմաններին  
ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար  
շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ  
պահանջներին համապատասխան»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Եթե  
պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է  
ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա  
պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ  
ժամանակահատվածի ցանկացած պահին»:

Դատարանը հիմնավորված է համարում այն հանգամանքը, որ ՀՀ  
գյուղատնտեսության նախարարության և «Արզնու Տոհմային ԹՏԽ»  
ԲԲԸ-ի միջև 2009 թվականի հուլիսի 4-ին կնքվել է տարաժամկետ  
վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏԿ 09/1

պայմանագիրը, 2009 թվականի հուլիսի 21 ին կնքվել է  
տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏԿ  
պայմանագիրը, 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքվել է  
տարաժամկետ վճարման պայմանով առուվաճառքի ՀՀԳՆ-ԵՏԿ-  
10/3 պայմանագիրը, որոնցով վճարման ժամկետ է սահմանվել  
համապատասխանաբար 2013 թվականի հուլիսի 05-ը, 2013  
թվականի հուլիսի 22-ը, 2013 թվականի սեպտեմբերի 17-ը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի համաձայն «1.

Առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը)  
պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն  
հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել  
այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը)»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 505 հոդվածի համաձայն «1.

Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի համար այն վաճառողից ստանալուց անմիջապես առաջ կամ հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով, իրավական ակտերով կամ առուվաճառքի պայմանագրով և չի բխում պարտավորության էությունից:

2. Գնորդը պարտավոր է հանձնված ապրանքի գինը վճարել ամբողջությամբ, եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված չէ ապրանքի համար վճարել տարաժամկետ (մաս առ մաս):

3. Եթե գնորդը ժամանակին չի վճարել առուվաճառքի պայմանագրին համապատասխան հանձնված ապրանքի համար, վաճառողն իրավունք ունի պահանջել վճարելու ապրանքի համար և տոկոսներ՝ սույն օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 505 հոդվածի համաձայն «2. Տարաժամկետ վճարելու պայմանով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 504 հոդվածի 2-6-րդ կետերով նախատեսված կանոնները»:

Ղատարանն արձանագրում է, որ պատասխանողը չի կատարել Պայմանագրերի 1-ի, 2-ի և 3-ի 2.4.3 կետերով սահմանված պարտավորությունները և նրա պարտքը հայցվորի նկատմամբ 2013թ. դեկտեմբերի 27-ի դրությամբ կազմում է Պայմանագիր 1-ի համաձայն 47959160 ՀՀ դրամ, Պայմանագիր 2-ի համաձայն 31268882 ՀՀ դրամ, Պայմանագիր 3-ի համաձայն է 11009444 ՀՀ դրամ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը»:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 409 հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները»:

Ղատարանն արձանագրում է, որ 02.06.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան հայցային պահանջի չափը նվազեցնելու մասին, իսկ 15.07.2014թ. հայցվորը դիմում է ներկայացրել դատարան, որով պնդել է հայցային պահանջը 27.565.763 ՀՀ դրամ, իսկ դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը չառարկեց նվազեցված հայցապահանջի դեմ:

Հետևաբար կողմերի մրցակցության և իրավահավասարության նորմերի գնահատման արդյունքում դատարանը հանգում է այն հետևության, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակի:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի «1. Ղատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ»:

Ղատարանը, վերը նշված իրավանորմերի և սույն գործով հաստատված փաստական հանգամանքների համադրման արդյունքում կատարելով գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն, ելնելով վերը նշված իրավանորմերի համադրումից, գալով ներքին համոզման հանգում է այն հետևության, որ հայցապահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակի:

Ղատական ծախսեր: Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին դատարանն արձանագրում է, որ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի համաձայն «Ղատական ծախսերը, ի թիվս այլ գումարների, կազմված են պետական տուրքից (...) և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից», իսկ համաձայն ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի «Ղատական

ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն», ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70 հոդվածի «Հայցագինը նվազեցնելու դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում»:

Քանի որ 20.01.2014թ. դատարանը որոշում է կայացրել սկզբնական հայցով պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, իսկ հայցապահանջը ենթակա է բավարարման, հետևաբար գտնում է, որ «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ից հոգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 551.315 ՀՀ դրամ որպես բավարարված պետական տուրքի գումար, իսկ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից հոգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 1.253.434 ՀՀ դրամ որպես բավարարված պետական տուրքի գումար:

Անդրադառնալով հայցվորի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությանը դատարանը 20.01.2014թ. որոշմամբ բավարարել է, հետևաբար հայցի ապահովման միջոցները պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, 140 հոդվածի 1-ին կետով, 1401 հոդվածի 1-ին կետով դատարանը

Եզրափակիչ մաս

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցապահանջը բավարարել մասնակի:

«Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ից հոգուտ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության բռնագանձել 27.565.763 /քսանյոթ միլիոն հինգ հարյուր վաթսուհինգ հազար յոթ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ: «Արզնու Տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 551.315 /հինգ հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ որպես պետական տուրքի գումար: ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 1.253.434 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ որպես պետական տուրքի գումար:

Վճիռը կանոլին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Քաղաքացիական Վերաքննիչ դատարան հրապարակման պահից 1 /մեկ/ ամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ ԷՂ. ՍԵՂՈՎԿՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	29-07-2014
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	551315
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	1253434
Այլ նշումներ:	